ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԿԱՐԵՆ ՅՈՒ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ. 1914-1917 ԹԹ.

Պատմության ֆակուլտետի պատմություն մասնագիտության
բակալավրիատի և մագիստրատուրայի
ուսանողների համար

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 93/94(042.4)
ԳՄԴ 63.3g7
Գ 316

Հրատարակվել է ԵՊՀ
Պատմության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Ալբերտ Ստեփանյան**

Գասպարյան Կարեն
Գ 316 ԱՄՆ արտաքին քաղաքականությունը Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին. 1914-1917 թթ.: Դասախոսությունների նյութեր/Կ. Գասպարյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 48 էջ:

Դասընթացը վերաբերում է Առաջին աշխարհամարտի ընթացքում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին-քաղաքական դիրքորոշմանը: Փորձ է արվել Միացյալ Նահանգների դիրքրոշումը ներկայացնել համընդհանուր խաղաղության պահպանման համատեքստում: Անդրադարձ է արվել նաև պատերազմին մասնակցելու դրդապատճառներին, որոնք ի վերջո հանգեցրին «պատերազմ հանուն խաղաղության» կարգախոսի կենսագործմանը:

Karen Yu. Gasparyan
U.S. Foreign Policy During World War I: 1914-1917

ՀՏԴ 93/94(042.4)
ԳՄԴ 63.3g7

ISBN 978-5-8084-2075-5

© ԵՊՀ հրատաակչություն, 2016
© Կարեն Գասպարյան, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑԸ	_4
	ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ	_6
	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	_8
ԹԵՄԱ 1	ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՎԻԼՍՈՆՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ	_10
ԹԵՄԱ 2	ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ԱՄՆ ՉԵՋՈՔ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ	_14
ԹԵՄԱ 3	ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽԱՂԱՂԱՐԱՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆՈՒՄԸ	_23
ԹԵՄԱ 4	ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ	_33
	ԱՄՓՈՓՈՒՄ	_40
	ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	_41

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑԸ

Դասախոսական նյութը ըստ ընտրված թեմաների ներկայացված է հետևյալ բովանդակային կառույցով.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վիեննայի համակարգի ճգնաժամը, Առաջին աշխարհամարտի առանձնահատկությունը, եվրոպակենտրոն միջազգային համակարգի փլուզումը:

ԹԵՄԱ 1 | ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՎԻԼՍՈՆՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ

Վուդրո Վիլսոնի նախագահությունը (1913-1921 թթ.), ԱՄՆ արտաքին քաղաքական հայեցակարգի վերանայումը, «Մոնրոյի դոկտրինան», «մեկուսացման քաղաքականությունը» «բաց դռների դոկտրինան», միսիոներական գործունեությունը, «վիլսոնականության» հայեցակարգը:

ԹԵՄԱ 2 | ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ԱՄՆ ՁԵՌՔ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Համաշխարհային հակամարտությունում ԱՄՆ դերակատարման ձևակերպումը և դիրքորոշման հստակեցումը, Վուդրո Վիլսոնի 1914 թ. օգոստոսի 4-ի հայտարարությունը, ուժերի հավասարակշռության ամերիկյան մեխանիզմը, չեզոքության ռազմավարությունը, «Արդարացի» խաղաղության նախապայմանը, 1909 թ. Լոնդոնի հռչակագիրը, ծովային շրջափակումը:

ԹԵՄԱ 3 | ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽԱՂԱՂԱՐԱՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆՈՒՄԸ

Միջնորդական խաղաղարար առաքելության գաղափարը, սփորջրյա պատերազմը, գերմանա-ամերիկյան հարաբերությունների վատթարացումը, Ուիլյամ Բրայանի և գնդապետ Հաուզի փոխզիջումային ծրագրերը, «ռազմական պատրաստվածության» միջոցառումների իրականացումը, խաղաղարար միջնորդության ռազմավարությունը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ | ԹԵՄԱ 4

Հրապարակային դիվանագիտության կոչը, գնդապետ Հաուզի «Խաղաղության նախագիծը», «Հաուզ-Գրեյ» համաձայնագիրը, «խաղաղություն առանց հաղթանակի», ԱՄՆ-Գերմանիա դիվանագիտական հարաբերությունների խզումը, «Ցիմմերմանի հայտագիրը», 1917 թ. ապրիլի 6-ի Գերմանիային պատերազմ հայտարարելու հռչակագիրը:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Դասախոսվող թեմայի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ և տեսական պատկերացումներ Եվրոպայի և Ամերիկայի նոր և նորագույն պատմության անցումային շրջափուլի վերաբերյալ: Ըստ այդմ առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել նախապատերազմյան աշխարհաքաղաքական տեղաշարժերը 20-րդ դարասկզբին:
- Քննել առնել եվրոպական տերությունների և ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական նկրտումները:
- Այս համատեքստում ներկայացնել հաստատվող նոր աշխարհակարգի էությունը և դրանում վերջիններիս քաղաքական դերաբաշխումը:
- Տալ ԱՄՆ արտաքին քաղաքական հայեցակարգի փոխակերպման վերլուծությունը և «վիլսոնականության» դոկտրինայի մեկնաբանումը:
- Մանրամասն անդրադառնալ քննարկվող ժամանակաշրջանում ԱՄՆ արտաքին քաղաքկան դիրքրոշմանը, մեկնաբանել և վերլուծել «չեզոքության» «միջամտության» և «հրապարակային դիվանագիտության» քաղաքականությունները:

❖❖❖

Անհրաժեշտ է.

ներկայացնել մատուցվող նյութի թեմատիկ բաժանման տրամաբանությունը՝ ելնելով դասախոսության հիմնախնդրային բնույթից,

դասախոսության ընթացքում օգտագործել նախապես պատրաստված ուսուցանող (դիդակտիկ) նյութեր (քարտեզ, պատմական կարևոր փաստաթղթերի էլեկտրոնային պատճեններ, ելույթների ձայնագրություններ և այլն),

հատկանշել արծարծվող թեմայի նկատմամբ հետազոտողների հետաքրքրության համապատմական դիտանկյունը:

❖❖❖

Դասախոսությունը նախատեսված է նաև միջազգային հարաբերությունների և քաղաքագիտական ուղղվածություն ունեցող լսարանի համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վիեննայի համակարգի ճգնաժամը, Առաջին աշխարհամարտի առանձնահատկությունը, եվրոպակենտրոն միջազգային համակարգի փլուզումը:

Վիեննայի վեհաժողովով հաստատված միջպետական փոխհարաբերություններում հավասարակշռության պահպանման ուժային մեխանիզմին փոխարինելու եկավ բարոյական և իրավական զսպող գործոններով կարգավորվող միջազգային համակարգը: Դրա շրջանակներում համաշխարհային դերակատարներին հաջողվեց պահպանել խաղաղությունը գրեթե մեկ հարյուրամյակ: Սակայն 19-րդ դարի վերջին եվրոպական հավասարակշռության համակարգը կրկին վերադարձավ կարգավորման ուժային հարացույցին, ինչն էլ հանգեցրեց համակարգային ճգնաժամի, որի դրսևումը եղավ Առաջին աշխարհամարտը:

1914 թ. ամռանը Սարաևոյում տեղի ունեցած սպանության հետևանքով շարժման մեջ դրվեց դաշինքների եվրոպական համակարգը և արդեն մեկ ամիս անց Եվրոպայում բռնկվեց կործանարար և աննախադեպ պատերազմ: Իր բնույթով այն միանգամայն այլ պատերազմ էր՝ արմատապես տարբերվող նախորդներից: Երկու խմբավորումների՝ Անտանտի և Եռյակ դաշինքի մասնակցումն այս պատերազմին վկայում էր վերջինիս համընդգրկուն լինելու մասին:

Առաջին աշխարհամարտի առանձնահատկությունն այն էր, որ այն ի սկզբանե չէր կարող լինել միայն եվրոպական տերութ-

յունների պատերազմ: Քանզի շոշափում էր գրեթե բոլոր պետությունների շահերը: Սա վերաբերում էր նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներին, որն արդեն հասցրել էր վերածվել տնտեսապես գերհզոր տերության և ձգտում էր առաջատար դիրքեր գրավել նաև համաշխարհային քաղաքական ասպարեզում: Պատերազմը կարծես պատեհ առիթ էր Միացյալ Նահանգների համար՝ դրսևորվելու որպես քաղաքական համաշխարհային դերակատար: Ամերիկայի Միացյալ Նահանգներին այլևս չէր գոհացնում միջազգային հարաբերություններում հաստատված եվրոպակենտրոն համակարգը: Նա ձգտում էր վերանայել ուժերի դասավորումն այդ հարաբերություններում և հավասար իրավունքով հանդես գալ առաջատար տերությունների շարքում: Այս հանգամանքով պայմանավորված հետպատերազմյան կարգավորման գործընթացը տարբերվում էր նախորդներից: Որպես կարգավորման գործընթացի գլխավոր դրակատար՝ եվրոպական տերությունների կողքին այս անգամ հանդես էր գալիս նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները:

ԹԵՄԱ 1 | ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՎԻԼՍՈՆՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ

Վուդրո Վիլսոնի նախագահությունը (1913-1921 թթ.), ԱՄՆ արտաքին քաղաքական հայեցակարգի վերանայումը, «Մոնրոյի դոկտրինան», «մեկուսացման քաղաքականությունը», «բաց դռների դոկտրինան», միսիոներական գործունեությունը, «վիլսոնականության» հայեցակարգը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների 28-րդ նախագահ Թոմաս Վուդրո Վիլսոնը (1856-1924 թթ.) իր կառավարման ընթացքում (1913-1921 թթ.) արմատապես փոխել էր երկրի արտաքին քաղաքական հայեցակարգը: Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական ավանդույթները՝ համակարգված, նպատակաուղղված և տեսականորեն հիմնավորված ձևավորվել էին դեռևս 19-րդ դարի 20-ական թթ.: Այս գործում իր հիմնարար դերակատարումն էր ունեցել «Մոնրոյի դոկտրինան»❖, որն ընկած էր Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության հիմքում

❖ «Մոնրոյի դոկտրինա». Միացյալ Նահանգների կառավարության արտաքին քաղաքական հայեցակարգի հիմնական դրույթներն են, որոնք հռչակվել են 1823 թ. դեկտեմբերի 2-ին Միացյալ Նահանգների (1817-1825 թթ.) նախագահ Ջեյմս Մոնրոյի (1758-1831 թթ.) կողմից (այստեղից էլ անվանումը) կոնգրեսին հղած ուղերձում: Այն առաջ էր քաշում աշխարհին ամերիկյան և եվրոպական համակարգերի բաժանելու և փոխադարձաբար միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքները: Հանուն արդարության պետք է նշել, որ Մոնրոն միայն կարդացել է այն, բոլոր դրույթները մշակել և ձևակերպել է պետքարտուղար Ջոն Քուինսի Ադամսը (1767-1848 թթ.)՝ Միացյալ Նահանգների ապագա նախագահը (1825-1829 թթ.), ով հաջորդեց Մոնրոյին:

ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը: Միացյալ Նահանգների այս քաղաքականությունը ստացավ «մեկուսացման քաղաքականություն» անվանումը: Միացյալ Նահանգները գնաց գիտակցված ինքնամեկուսացման եվրոպական, ասել է թե՝ համաշխարհային քաղաքականությունից, ստանձնելով Արևմտյան կիսագնդի անվտանգության պահապանի դերը: Պանամայի ջրանցքի կառուցմամբ (1879-1914 թթ.) հաստատվեց ամերիկյան ռազմածովային գերակայությունը ինչպես Ատլանտյան, այնպես էլ Խաղաղ օվկիանոսներում: 1898 թ. իսպանա-ամերիկյան պատերազմը, 1899-ին պետքարտուղար Ջոն Հեյի (John Hay)❖ կողմից առաջ քաշված «բաց դռների» դոկտրինան, և 19-րդ դարի վերջին երեսնամյակում իրականացվող ակտիվ միսիոներական գործունեությունը Միացյալ Նահանգներին դուրս բերեցին, ինչպես Վուդրո Վիլսոնն է նշում «համաշխարհային թատերաբեմ», և սկսվեց նոր դարաշրջան, որում Ամերիկան պետք է «կառավարեր աշխարհը»՝ զբաղեցնելով իր արժանի տեղը «Ազգերի վեհաժողովում»:

«Մոնրոյի դոկտրինայի» համաձայն՝ Միացյալ Նահանգներն «արգելեց» աշխարհի մյուս երկրներին միջամտել իր ներքին և

❖ Ջոն Միլթոն Հեյ (John Milton Hay)՝ 1898-1905 թթ. Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղար: 1899 թ. առաջ քաշեց «բաց դռների» դոկտրինան, որի նպատակը Միացյալ Նահանգների չինական շուկա ներթափանցելն էր: Աշխարհաքաղաքական տեսանկյունից այն հետապընդում էր տնտեսական ներկայությունը քաղաքականի վերածելու և Չինաստանում ազդեցության ոլորտների բաժանման գործընթացին Մեծ տերությունների հետ մասնակցելու նպատակ:

ներմայրցամաքային գործերին: Նման քաղաքականության արդյունքում Միացյալ Նահանգները կարողացավ շատ արագ զարգանալ՝ իր ազդեցությունը տարածելով ողջ ամերիկյան մայրցամաքում, և, դառնալով տարածաշրջանային տերություն, համաշխարհային գերտերության հայտ ներկայացրեց: Նման պարագայում Եվրոպայի հետ շփումը դառնում էր քաղաքական անհրաժեշտություն:

Գալով իշխանության՝ նախագահ Վիլսոնն իր արտաքին քաղաքականությամբ և միջազգային խնդիրների հանդեպ մոտեցումներով բեկում մտցրեց Միացյալ Նահանգների քաղաքական ավանդույթների մեջ: Նա տեսնում էր Միացյալ Նահանգների ավանդական արտաքին քաղաքական հայեցակարգի՝ մեկուսացվածության վերանայման անհրաժեշտությունը: Նրա առաջ քաշած գաղափարները նոր աշխարհակարգի վերաբերյալ մեկտեղվեցին «վիլսոնականության» հայեցակարգի մեջ և կըտրուկ տարբերվում էին «Մոնրոյի դոկտրինայի», «Մեծ Մահակի» և «Դոլարի դիվանագիտության» սկզբունքներից: Նա քաջ գիտակցում էր, որ նախագահ Մոնրոյից հետո իրավիճակն աշխարհում արմատապես փոխվել էր և դա առանձնապես ակնառու դրսևորվեց 20-րդ դարասկզբին:

Կոչ անելով հրաժարվել մեկուսացումից՝ Վուդրո Վիլսոնն ամենևին էլ չէր հրաժարվում «Մոնրոյի դոկտրինայից», այլ փորձում էր վերամեկնաբանել այն՝ կախված ժամանակի հրամայականից և ամերիկյան հնարավորությունների մակարդակից: Վուդրո Վիլսոնը համարում էր, որ Միացյալ Նահանգների նոր

տնտեսական մակարդակը հակասում էր ոչ միայն նրա հնացած քաղաքական ձևերին, այլև այդ երկրի համաշխարհային դիրքին: Միացյալ Նահանգների քաղաքական մեկուսացվածությունը համաշխարհային գործերից խոչընդոտում էր երկրի հետագա զարգացմանը:

Ինչ խոսք, Միացյալ Նահանգներն ու նախագահ Վիլսոնը հետապնդում էին որոշակի նպատակ՝ աշխարհում առաջատար դիրքի հասնելու և ամերիկյան ազդեցությունն ու հասարակական համակարգը հնարավորինս շատ ազգերի վրա տարածելու: Սակայն դրան հասնելն առաջարկվում էր ոչ թե ավանդական մեթոդով (ագրեսիա, ռազմական միջամտություն, սպառազինության մրցավազք), այլ միջազգային հարաբերությունների ժողովրդավարացման, աշխարհի ազգերին ինքնահաստատվելու հավասար պայմանների և հնարավորությունների տրամադրման միջոցով: Այս ճանապարհին Առաջին աշխարհամարտը փայլուն հնարավորություն էր Միացյալ Նահանգների «քաղաքական և ռազմական ինքնադրսևորման» համար: Եվ Միացյալ Նահանգները, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, կարողացավ դեպի Եվրոպա տեղափոխել ամերիկյան ռազմական ուժն ու ժողովրդավարական կառավարման ողջ արժեհամակարգը՝ դրանով իսկ ձեռք բերելով անհրաժեշտ հենահարթակ այն աշխարհով մեկ տարածելու համար:

ԹԵՄԱ 2 | ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ԱՄՆ ՉԵԶՈՔ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Համաշխարհային հակամարտությունում ԱՄՆ դերակատարման ձևակերպումը և դիրքորոշման հստակեցումը, Վուդրո Վիլսոնի 1914 թ. օգոստոսի 4-ի հայտարարությունը, ուժերի հավասարակշռության ամերիկյան մեխանիզմը, չեզոքության ռազմավարությունը, «արդարացի» խաղաղության նախապայմանը, 1909 թ. Լոնդոնի հռչակագիրը, ծովային շրջափակումը:

Եվրոպայում բռնկված պատերազմը յուրատեսակ ցնցում առաջացրեց Միացյալ Նահանգներում: Ամերիկյան կառավարությունը պետք է հստակ կողմնորոշվեր. անհրաժեշտ էր ձևակերպել Միացյալ Նահանգների դերն այս հակամարտությունում: Նախագահ Վիլսոնը և ամերիկյան քաղաքական վերնախավը համոզված էին, որ այս պատերազմը երկար չէր տևի, ընդ որում ամերիկյան մամուլում ևս շրջանառվում էր այդ տեսակետը, ուստի ուղղակի միջամտել այդ կարճատև ընդհարմանը կարելի է ասել «անիմաստ էր»: 1914 թ. օգոստոսի 4-ին նախագահ Վիլսոնը հայտարարեց Միացյալ Նահանգների չեզոքության մասին:

Արդյոք այս հայտարարությունը Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության «խաղաղասեր կեցվածքի» դրսևորումն էր, թե այն կարող էր ունենալ ավելի հեռուն գնացող աշխարհաքաղաքական նկրտումներ: Իհարկե, Միացյալ Նահանգներն առնչություն չուներ պատերազմի բռնկման նախապայմանների հետ: Այն, այսպես ասած, «ոչ ամերիկյան» էր: 1914 թ. նոյեմբերին ամերիկյան հեղինակավոր թերթերի խմբագիրների

շրջանակում անցկացված հարցման տվյալներով 327 հարցվողներից 242-ը հայտարարել էին իրենց չեզոք հայացքների մասին: Այս տրամադրվածությունն արտահայտվեց նաև «դա մեր պատերազմը չէ» կարգախոսի տարածմամբ: Այս պարագայում Միացյալ Նահանգների կտրուկ դիրքորոշումը պատերազմող կողմերից մեկին աջակցելու կապակցությամբ կարող էր ներքին հասարակական լուրջ խռովությունների առիթ հանդիսանալ, ինչն անցանկալի էր նախագահ Վիլսոնին միջազգային լարումի պայմաններում: 1914 թ. օգոստոսի 19-ին ամերիկյան ժողովրդին ուղղված իր ելույթում նախագահ Վիլսոնը «անաչառ մտածելու և գործելու» կոչով հաստատեց իր որդեգրած չեզոքության և չմիջամտելու քաղաքականությունը:

Սակայն պատերազմի մեքենան նոր էր սկսել թափ հավաքել: Կողմերը ձգտում էին որքան հնարավոր է արագ հասնել վճռական արդյունքների: Բրիտանական կողմը վստահ էր, որ պատերազմը մոտակա ամիսներին կավարտվի Անտանտի հաղթանակով: Այդ մասին սեպտեմբերի 15-ին գնդապետ Հաուզին հայտնել էր Լոնդոնում Վաշինգտոնի դեսպան Վոլթեր Փեյջը (Walter Page):

Բեռլինում ամերիկյան դեսպան Ջեյմս Ջերարդը (James Gerard) նույնպես հայտնեց պաշտոնական Վաշինգտոնին պատերազմը շարունակելու գերմանական կողմի վճռականության մասին:

Նախագահ Վիլսոնը լավ գիտակցում էր, որ պատերազմի ընթացքն ու արդյունքներն ուղղակիորեն առնչվելու էին Միաց-

յալ Նահանգների ազգային շահերի հետ: Եվ բնականաբար Միացյալ Նահանգներին ձեռնտու չէր հակամարտող որևէ կողմի լիակատար հաղթանակը: Այն կարող էր հանգեցնել ուժերի հավասարակշռության ամերիկյան մեխանիզմի խախտմանը: Եթե հաղթանակ տաներ գերմանական կողմը, ապա Եվրոպայում կհաստատվեր գերմանական գերիշխանություն, իսկ Ամերիկան կունենար իրական և ուժեղ հակառակորդ, որն ի վիճակի կլիներ ձեռնոց նետել Միացյալ Նահանգներին նույնիսկ այն տարածաշրջանում, որն ավանդաբար գտնվում էր ամերիկյան ազդեցության ներքո:

Մեկ այլ կողմից Անտանտի հաղթանակը Միացյալ Նահանգների համար կարող էր դիտվել նույնքան անցանկալի, քանզի այն կարող էր ամրապնդել Մեծ Բրիտանիայի տիրապետող դիրքերը ծովերում և Ֆրանսիայի ու Ռուսաստանի գերակայությունը եվրոպական մայրցամաքում:

Այս ամենը կսահմանափակեր Միացյալ Նահանգների դիրքերը համաշխարհային շուկայում, ինչի կարիքն ուներ երկրի բուռն զարգացում ապրող տնտեսությունը: Աշխարհաքաղաքական տեսանկյունից Միացյալ Նահանգները գերադասում էր տեսնել Եվրոպան երկփեղկված երկու հակամարտող ճամբարների: Ընդհանուր հաշվարկով հենց այս հակամարտության առկայությունը թույլ կտար Միացյալ Նահանգներին ավելացնել իր հզորությունը՝ չվախենալով եվրոպական հակամարտությունից: Այս պարագայում նախագահ Վիլսոնին կհաջողվեր հանդես գալ որպես «համաշխարհային խաղաղարար» և դուրս բերել իր եր-

կիրը համաշխարհային քաղաքական ասպարեզ ոչ թե որպես շարքային, այլ առաջատար, թելադրող դիրք ունեցող երկիր:

Միացյալ Նահանգների դիրքորոշման հարցում առաջնային դեր ուներ նաև տնտեսական գործոնը: Նախագահ Վիլսոնը լավ գիտակցում էր, որ իր վարած չեզոքության քաղաքականությունը երկրին կբերեր նաև տնտեսական գերշահույթ: Գաղտնիք չէր, որ պատերազմը պահանջելու էր հսկայական ֆինանսական, նյութական և ռազմական միջոցներ: Պատերազմի սկզբից շատ չանցած՝ հակամարտող կողմերն արդեն սկսեցին զգալ ֆինանսական օժանդակության կարիք: Ակնհայտ էր, որ նրանք վաղ թե ուշ կգտնեին մի երկիր, որը պատրաստ կլիներ նրանց մատակարարել ռազմավարական նշանակության ապրանքներ: Ինչո՞ւ Միացյալ Նահանգները չդառնար այդ երկիրը: Ավելին, եթե պատերազմող երկրները չկարողանան կանխիկ վճարել այդ ապրանքների դիմաց, ապա Միացյալ Նահանգների կառավարությունը պատրաստ էր նրանց տրամադրել երկարաժամկետ վարկեր:

Պատերազմող կողմերի հետ ունեցած ակտիվ առևտրական փոխհարաբերությունների արդյունքում Եվրոպայում շրջանառվող ոսկու զգալի մասն աստիճանաբար կուտակվեց Միացյալ Նահանգների ձեռքում: Միացյալ Նահանգները պարտապանից արագորեն վերածվեց պարտատուի: Եթե 1914 թ. դրությամբ երկիրը եվրոպական տերություններին ուներ 3.7 մլդ դոլար պարտք, ապա պատերազմի ավարտին ամերիկյան ներդրողների տրամադրած վարկերն այլ պետություններին կազմում էին

շուրջ 3.8 մլդ դոլար: 1914 թ. օգոստոսի 18-ին նախագահ Վիլսոնը ստորագրեց օրենք, որի համաձայն՝ Միացյալ Նահանգների կառավարությունը սկսեց գնել արտասահմանյան, հիմնականում գերմանական ներկալված նավերը: Այս կապակցությամբ ամերիկյան առևտրական նավատորմի տոննաժն ավելացավ (այն 1914 թ. դրությամբ 1.076.152 տոննա էր, 1915 թ.-ին հասավ 1.871.543 տոննայի, իսկ արդեն պատերազմի ավարտին այն 3 մլն տոննա էր):

Հստակ է, որ Միացյալ Նահանգները հետապնդում էր կարճ ժամանակամիջոցում տնտեսապես գերիզոր տերություն դառնալու քաղաքականություն, որին պատերազմի ավարտին պարտք էր լինելու գրեթե ողջ պատերազմող աշխարհը, և որը, անկասկած, ունենալու էր իր թելադրող դիրքը հետպատերազմյան աշխարհակարգի հաստատման գործում: Այս ամենը բնականաբար իր ազդեցությունն ունեցավ Միացյալ Նահանգների դիրքորոշման վրա և վերջինիս «չեզոքությունն» աստիճանաբար սկսեց վերածվել «միջնորդության»: Նախագահ Վիլսոնն իր ելույթներում արդեն սկսեց շեշտադրումներ անել հետպատերազմյան աշխարհի կառուցվածքի վերաբերյալ: Նրա կարծիքով Միացյալ Նահանգները ստացել էր ձայնի իրավունք պատերազմի և խաղաղության հարցերի վճռման մեջ. «Մենք դադարել ենք պարտապան լինելուց և վերածվել ենք վարկատուի: Մենք զգալի չափով ֆինանսավորում ենք աշխարհը, իսկ ով ֆինանսավորում է, պետք է նաև կառավարի այն»:

Այսպիսով՝ Ամերիկայի ինքնահաստատումը համընդհանուր հակամարտության պայմաններում ավարտվեց այն եզրահանգմամբ, որ Ամերիկան, չմասնակցելով հակամարտությանը, անխուսափելիորեն պետք է ստանձներ համաշխարհային առաջատարի դերը, քանի որ Եվրոպան, սանձազերծելով պատերազմը, կորցրել է առաջատարի ինչպես բարոյական իրավունքը, այնպես էլ ֆինանսատնտեսական հիմքը: Ինչպես տեսնում ենք, ամերիկյան արտաքին քաղաքական միտքը կենտրոնանում էր Հին և Նոր աշխարհների հակադրման վրա: Պատերազմի եվրոպական մասնակիցներն ամերիկացիների գիտակցության մեջ հանդես էին գալիս որպես մեկ ամբողջություն, որոնք բոլորն էլ ունեին կայսերապաշտական ձգտումներ և պայքարում էին իրենց զավթողական նկրտումների իրականացման համար:

Չնայած իր չեզոք դիրքորոշմանը՝ ամերիկյան կողմը ժամանակ առ ժամանակ հանդես էր գալիս հակամարտությունը կարգավորելու միջնորդական հայտարարություններով, ինչը վկայում էր ամերիկյան չեզոքության ռազմավարության մասին:

Պատերազմի սկզբին Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական գործողությունների մյուս վեկտորն ուղղված էր «ծովերի ազատության» ավանդույթի և չեզոք երկրների իրավունքների պահպանմանը: 1914 թ. օգոստոսի 6-ին Միացյալ Նահանգների պետդեպարտամենտը դիմեց պատերազմող կող-

մերին՝ ընդունելու 1909 թ. Լոնդոնի հռչակագիրը❖, որը սահմանում էր ծովային պատերազմի կանոնները: Ինչպես հայտնի է, այս հռչակագիրը պարունակում էր չեզոք նավագնացությանը վերաբերող դրույթ:

Մեծ Բրիտանիան դեմ արտահայտվեց այս նախաձեռնությանը՝ գործի դնելով իր ծովային առավելությունը: Սեպտեմբերի 2-ին Հյուսիսային ծովը հայտարարվեց «ռազմական գոտի» և առաջարկվեց բոլոր չեզոք նավերին անցնել Լա Մանշի և Դուվրյան (Պա դե Կալե) նեղուցներով, որտեղ նրանք պետք է ենթարկվեին պարտադիր մաքսային խուզարկման: Միացյալ Նահանգները դատապարտեց Մեծ Բրիտանիայի այս քայլը: Ի պատասխան ուղարկվեց հայտագիր, որով պահանջվեց Մեծ Բրիտանիայից անվերապահորեն ընդունել և կատարել հռչակագրի պայմանները: Հայտագրում կար նաև նախազգուշացում, համաձայն որի՝ բրիտանական կողմի բացասական պատասխանը կարող էր թարմացնել Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի միջև եղած վաղեմի վեճը❖:

❖ 1909 թ. Լոնդոնի վեհաժողովում Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Իտալիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ճապոնիան, Հոլանդիան և Իսպանիան ստորագրեցին «Հռչակագիր ծովային պատերազմի իրավունքի մասին»: Այն հաստատում էր պատերազմի ժամանակ չեզոք երկրների իրավունքները ծովային առևտրում:

❖ Խոսքը վերաբերում էր 1812-1815 թթ. անգլո-ամերիկյան պատերազմին, որի հիմնական պատճառներից մեկը Մեծ Բրիտանիայի կողմից Միացյալ Նահանգների չեզոք իրավունքների խախտումն էր:

Չնայած Միացյալ Նահանգների պահանջներին՝ բրիտանական կառավարությունը չէր ցանկանում ընդունել Լոնդոնի հռչակագիրը: Մեծ Բրիտանիայի նման դիրքորոշումը կարելի է բացատրել նրանով, որ հռչակագրի անվերապահ ընդունումը կարող էր խոչընդոտել Գերմանիային տնտեսապես շնչահեղձ անելու անգլիական ծրագրերին:

Գերմանական կողմն այլ վերաբերմունք ուներ հռչակագրի կիրառման հարցում: Այն կանխատեսում էր կայծակնային հաղթանակ պատերազմում և պատերազմի արագ ավարտ, քանի որ երկիրը տնտեսապես պատրաստ չէր երկարատև պատերազմի: Հետևաբար, պատերազմի երկարաձգման հետ մեկտեղ Գերմանիան հայտնվեց տնտեսական ծանր կացության մեջ: Գերմանիան կարիք ուներ ռազմավարական հումքի, որը հնարավոր էր ձեռք բերել միայն չեզոք երկրներից: Բրիտանական շրջափակման պայմաններում Գերմանիան զրկվում էր այդ հնարավորությունից: Այս ամենը լավ գիտակցում էր նաև Մեծ Բրիտանիան:

Բրիտանական կառավարությունը, շարունակելով իր շրջափակման քաղաքականությունը, ընդլայնեց նաև այն ապրանքների ցանկը, որոնք ենթակա էին բռնագրավման՝ հակառակորդի կողմից օգտագործվելու փոքր իսկ հնարավորության դեպքում: Նման պայմաններում ամերիկյան կողմն իրեն իրավունք վերապահեց բողոքարկելու Միացյալ Նահանգների առևտրական շահերի ոտնահարման յուրաքանչյուր քայլի դեմ: Սա հանգեցրեց Անգլա-ամերիկյան դիվանագիտական հարաբերություն-

ների ծայրաստիճան սրացման: Միացյալ Նահանգների Կոնգրեսում լուրջ քննարկման ենթարկվեց նաև բրիտանական ռազմական մատակարարումների վրա օրենսդրական սահմանափակումներ դնելու հարցը:

Ամերիկյան դիրքորոշման հարցում էական էր նաև այն, որ Միացյալ Նահանգների կառավարությունում դեռևս չկար միասնական տեսակետ: Միացյալ Նահանգների լիակատար չեզոքության կողմնակից էր պետքարտուղար, դեմոկրատների առաջնորդներից Ուիլյամ Բրայանը (William Bryan): Վերջինս կողմ էր չեզոքությանը, բայց ոչ մեկուսացմանը: Նա հանդես էր գալիս նախագահ Վիլսոնի վարած խուսանավման քաղաքականության դեմ՝ խրախուսելով բաց հարաբերությունների հաստատումը և՛ Գերմանիայի, և՛ Մեծ Բրիտանիայի, և՛ Ֆրանսիայի հետ: Այդուհանդերձ Ուիլյամ Բրայանն իր արտաքին քաղաքական հայացքներում, վերջին հաշվով, հարազատ էր «Մոնրոյի դոկտրինային» և առաջնային տեղ էր տալիս ամերիկյան մայրցամաքի խնդիրներին:

Շատ կարևոր է նաև գնդապետ Հաուզի մոտեցումն ամերիկյան դիրքորոշման խնդրին: Վերջինս կողմնակից էր Միացյալ Նահանգների Անտանտի կողմից հանդես գալուն: Գնդապետ Հաուզն առաջիններից էր, որ Միացյալ Նահանգների հնարավոր մասնակցությունը պատերազմին ներկայացրեց գաղափարական հենքով. «Դա պետք է լիներ պայքար ժողովրդավարության համար ընդդեմ բռնապետության, որը մարմնավորում էր Գերմանիան»:

Անակնկալ պատերազմից ամերիկյան դիվանագիտության շփոթվածությունը, կարծում ենք, ևս կարևոր դերակատարում ունեցավ: Կարելի է ասել՝ բացակայում էր հետագա գործողությունների քիչ թե շատ մտածված ծրագիրը: Գուցե այս հանգամանքով էր պայմանավորված նախագահ Վիլսոնի 1914թ. Օգոստոսի 19-ի ելույթում արված այն հայտարարությունը, որով նա կոչ էր անում ամերիկյան ազգին լինել «անաչառ մտքով և գործով»: Միացյալ Նահանգներն իր արտաքին քաղաքական առաջիկա ծրագրերում պատրաստ չէր դեպքերի նման կտրուկ զարգացմանը, ինչը հանկարծակիի բերեց նախագահ Վիլսոնին: Հայտնի է վերջինիս արտահայտությունը՝ արված մերձավորների շրջանակում: Լսելով պատերազմի բռնկման լուրը՝ նախագահ Վիլսոնն ակամայից բացականչել էր. «Անհնար է, դա անհնար է»: Ակնհայտ է, որ անհրաժեշտ էր նոր ճանապարհների որոնում համաշխարհային գերտերություն դառնալու վիլսոնյան ծրագրերի իրականացման համար, քանի որ պատերազմը փոխեց խաղի բոլոր կանոնները, իսկ դրա համար բնականաբար ժամանակ էր անհրաժեշտ: Իսկ ժամանակ շահելու և ճիշտ կողմնորոշվելու լավագույն տարբերակն այս պարագայում, կարծում ենք, չեզոքության դրսևորումն էր, ինչը և արեց նախագահ Վիլսոնը 1914թ. օգոստոսի 4-ի իր հայտարարությամբ:

ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽԱՂԱՂԱՐԱՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆՈՒՄԸ | ԹԵՄԱ 3

Միջնորդական խաղաղարար առաքելության գաղափարը, ստորջրյա պատերազմը, գերմանա-ամերիկյան հարաբերությունների վատթարացումը, Ուիլյամ Բրայանի և գնդապետ Հաուզի փոխզիջումային ծրագրերը, «ռազմական պատրաստվածության» միջոցառումների իրականացումը, խաղաղարար միջնորդության ռազմավարությունը:

1914 թ. օգոստոսից դեկտեմբեր ընկած հատվածը կարելի է բնութագրել որպես ամերիկյան կառավարության շփոթվածության փուլ, երբ բացակայում էր որևէ հստակ արտաքին քաղաքական հայեցակարգ նոր և կտրուկ փոփոխվող պայմաններում: Միայն 1914 թ. վերջին կառավարության անդամներն ունեցան համապատասխան տեսակետներ, և հստակ դարձավ Միացյալ Նահանգների հակվածությունը միջնորդական խաղաղարար առաքելության գաղափարի նկատմամբ:

Ամերիկային իր դիրքորոշման հարցում որոշ չափով «օգնեց» նաև ստորջրյա պատերազմը, որը գերմանական կողմի պատասխանն էր Մեծ Բրիտանիայի շրջափակման քաղաքականությանը: Ստորջրյա պատերազմը փրկարար օղակ էր Գերմանիայի համար: Այն վերջինիս հնարավորություն էր տալիս լուծելու երեք առաջնային կարևորություն ունեցող խնդիրներ՝ ռազմածովային ուժերի հավասարեցում հակառակորդի հետ, Անտանտի և Միացյալ Նահանգների միջև գոյություն ունեցող առևտրի դադարեցում և դաշնակցային բլոկի զգալի թուլացում:

Գերմանական կառավարող շրջանակները քաջ գիտակցում էին, որ ստորջրյա պատերազմը խիստ կսրի գերմանա-ամերիկյան հարաբերությունները, սակայն ռազմածովային ուժերի անհավասարության դեպքում, երբ բացառվում էր ուժերի ուղիղ առճակատումը, նպատակին հասնելու ամենաիրատեսական ճանապարհը դա էր:

1915 թ. փետրվարի 4-ին Գերմանիան հայտարարեց ստորջրրյա պատերազմ: Մեծբրիտանական և իռլանդական շրջակա ջրային տարածքները հայտարարվեցին ռազմական գոտիներ: Ռազմական գոտում հայտնված յուրաքանչյուր նավ ենթակա էր ռմբակոծման: Չեզոք նավերը նույնպես վտանգված էին ռազմական գոտում հայտնվելու դեպքում: Ստորջրյա պատերազմն իրականում նպաստեց գերմանա-ամերիկյան հարաբերությունների վատթարացմանը: Նախ վտանգվեց ծովում Բրիտանիայի առավելությունը, ինչն իր հերթին կարող էր վատթարացնել դաշնակիցների ընդհանուր դրությունը: Այն կարող էր բացասաբար անդրադառնալ նաև Անտանտի երկրների և Միացյալ Նահանգների առևտրական կապերին, իսկ սա արդեն լուրջ վնաս էր ամերիկյան տնտեսությանը: Այդ իսկ պատճառով ամերիկյան կողմը Գերմանիայի նման քաղաքականությունը որակեց «չեզոք իրավունքների (indefensible) ոտնահարում» և զգուշացրեց, որ Գերմանիան կենթարկվի խիստ պատասխանատվության (strict accountability) ամերիկացիների կյանքի կամ ունեցվածքի կորստի դեպքում:

Սակայն այս նախազգուշացումը չկանգնեցրեց Գերմանիային: Փետրվարի 18-ին վերջինս ձեռնամուխ եղավ ստորջրյա պատերազմի գործնական իրականացմանը:

Ստորջրյա պատերազմը կանխելու ամերիկյան ջանքերն անցան ապարդյուն:

Ամերիկյան կողմը փորձեց հարցիը լուծել դիվանագիտական ճանապարհով: Պետքարտուղար Ուիլյամ Բրայանը նախագահ Վիլսոնի քննարկմանը ներկայացրեց մի նախագիծ, ըստ որի՝ Մեծ Բրիտանիային առաջարկվում էր թուլացնել շրջափակումը և թույլատրել պարենային ապրանքների մուտքը Գերմանիա, իսկ Գերմանիային՝ սահմանափակել սուզանավերի գործողությունները՝ ավարի իրավունքի սկզբունքով (նավերի խուզարկում, մաքսանենգ ապրանքի բռնագրավում, անձնակազմի և ուղևորների անվտանգության ապահովում), ինչպես նաև Մեծ Բրիտանիան և Գերմանիան պետք է դադարեցնեին ականների տեղադրումը բաց ծովում:

Նախագիծը 1915 թ. փետրվարի 20-ին ուղարկվեց Լոնդոն և Բեռլին:

Գերմանական կողմի պատասխանը դրական էր: Վերջինս պահանջում էր ռազմավարական հումքի անխոչընդոտ ներմուծում, ինչը փաստացի նշանակում էր շրջափակման վերացում: Սակայն բրիտանական կողմը չէր ուզում հրաժարվել շրջափակման քաղաքականությունից, այդ իսկ պատճառով դեմ արտահայտվեց ամերիկյան փոխզիջումային ծրագրին:

Փաստորեն Միացյալ Նահանգներին հերթական անգամ չհաջողվեց իրականացնել իր ծրագիրը: Սակայն սա չհիասթափեցրեց ամերիկացիներին, և Ուիլյամ Բրայանի նախագծի փոխարեն առաջարկվեց Էդուարդ Հաուզի նախագիծը, որը նախատեսում էր «ծովերի ազատության» կարգի կիրառում: Համաձայն այս նախագծի՝ Գերմանիան պետք է դադարեցներ ստորջրյա պատերազմը, իսկ Մեծ Բրիտանիան նվազագույնի պետք է հասցներ մաքսանենգ համարվող ապրանքների ցուցակը՝ այդ շարքում թողնելով միայն բացառապես ռազմական կարիքների համար օգտագործվողները:

Գնդապետ Հաուզի առաջարկած ծրագիրը նույնպես գերմանական կողմի համար շահեկան էր, քանի որ «ծովերի ազատությունը» կնպաստեր գերմանա-ամերիկյան առևտրի վերականգնմանը, և Գերմանիան դուրս կգար բրիտանական շրջափակումից:

Այլ էր դրությունը Մեծ Բրիտանիայում: Լոնդոնում գնդապետ Հաուզը բազմիցս փորձեց համոզել Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էդուարդ Գրեյին (Edward Grey), որ ունենալով ամենաուժեղ նավատորմը՝ Մեծ Բրիտանիան կունենա ամենամեծ շահույթները «ծովերի ազատությունից»: Սակայն բրիտանական կողմն անկոտրում էր և չէր պատրաստվում հրաժարվել շրջափակման քաղաքականությունից:

Հարկ է ընդգծել, որ Գերմանիայի վարած ստորջրյա պատերազմն ուղղված էր Անտանտի նավերի դեմ: Սակայն, ինչպես վերը նշվեց, գերմանական կողմը հայտարարել էր, որ չեզոք նա-

վերը նույնպես վտանգված են և հայտնվելով ռազմական գոտում, կարող են ենթարկվել ռմբակոծման: Միջադեպերն իրենց սպասեցնել չտվեցին. 1915-1917 թթ. ընթացքում գերմանական սուզանավերը խորտակեցին երկու տասնյակից ավել ռազմական և առևտրական նավեր❖:

Ստեղծված իրավիճակում, իր կամքից անկախ, Ամերիկան կանգնեց պատերազմի մեջ ներքաշվելու վտանգի եզրին: Սկսեց ակտիվ քննարկվել Գերմանիային պատերազմ հայտարարելու հարցը: Սակայն ամերիկյան հասարակությունը դեռևս պատրաստ չէր պատերազմի: Ըստ հարցումների, որին մասնակցել էին ամերիկյան հեղինակավոր թերթերի խմբագիրները, «Լուզիտանիայի» միջադեպից անմիջապես հետո, հասարակության մեջ գերիշխող էր չեզոքության պահպանման տրամադրությունը: Հարցված 1000 հոգուց միայն 6-ն էին արտահայտվել Գերմանիային անմիջապես պատերազմ հայտարարելու օգտին:

Նախագահ Վիլսոնը նույնպես կանգնած էր բարդ ընտրության առջև: Նա գտնվում էր «ներքին հակամարտության» միջև. մի կողմից վտանգվում էր Ամերիկայի միջազգային հեղինակու-

❖ 1915 թ. մարտի 28-ին գերմանական սուզանավը տորպեդահարեց «Ֆալաբա» բրիտանական նավը, ապրիլի 29-ին ամերիկյան «Քուշինգ» նավը վնասվեց գերմանական ռմբահարման հետևանքով, մայիսի 1-ին հարձակման ենթարկվեց «Գալֆլայթ» ամերիկյան լցանավը (տանկեր), 1915 թ. մայիսի 7-ին գերմանական «U-20» սուզանավը Իռլանդական ծովում խորտակեց բրիտանական «Լուզիտանիա» մարդատար նավը և այլն:

թյունը, և Գերմանիային պատերազմ հայտարարելն ուղղակի անհրաժեշտություն էր, մյուս կողմից կարևոր էր նաև չեզոքության պահպանումը, քանզի վերջինս չէր ցանկանում դեմ գնալ ամերիկյան հասարակության կարծիքին: Նախագահ Վիլսոնը որոշեց չդիմել կտրուկ քայլերի և հայտարարեց, որ ամերիկյան հասարակությունը «խիստ հպարտ է կռվելու համար», և որ Միացյալ Նահանգները դեռ պատրաստ չէ նման քայլի: Պատերազմի համար բանակը չէ, որ հարկավոր է կոփել, այլ՝ ազգը:

Նախագահ Վիլսոնի համար՝ որպես բարոյական գաղափարներ կրողի և քարոզողի, գլխավոր փաստն այն էր, որ Գերմանիայի կողմից հրահրված ստորջրյա պատերազմը՝ բացի չեզոք նավերի կործանումից, հանգեցնում էր նաև խաղաղ բնակչության զոհերի: Այս հանգամանքը, իհարկե, մարդասիրական տեսանկյունից չէր արդարացվում: Ամերիկյան կառավարությունը, ճիշտ է, չգնաց ուղղակի առճակատման Գերմանիայի հետ, սակայն ձեռնամուխ եղավ գերմանական գործողությունների սահմանափակմանը ստորջրյա պատերազմում: 1915 թ. մայիսի 13-ին Միացյալ Նահանգները Գերմանիայի կառավարությանը «Լուզիտանիայի գործով» հայտագիր ներկայացրեց, որով պահանջեց դադարեցնել հարձակումը ուղևորատար նավերի վրա և ապահովել բոլոր չեզոք նավերի անվտանգությունը: Միաժամանակ 1915 թ. մայիսին գտնվելով Լոնդոնում՝ գնդապետ Հաուզը կրկին հանդես եկավ շրջափակումը վերացնելու և ստորջրյա պատերազմը դադարեցնելու առաջարկով: Բրիտանական կողմը դժվարանում էր հստակ պատասխան տալ. Կար-

ծես թե սպասում էր գերմանական կողմի արձագանքին: Գերմանիան տվեց բացասական պատասխան, (Էդուարդ Հաուզի առաջարկը մերժվեց) որից հետո միայն Էդուարդ Գրեյը հայտարարեց, որ եթե Գերմանիան ընդուներ Էդուարդ Հաուզի առաջարկը, կնշանակեր, որ իրոք ունի պարենի կարիք, ուստի դեռևս կարիք չկա, որ Մեծ Բրիտանիան թուլացնի իր ճնշումը:

Արդյունքում ձախողվեց ամերիկյան խաղաղարար միջնորդության ևս մեկ փորձ, և անիմաստ էր դառնում անդադար հայտագրերի հղումը: Թվում էր, թե Ուիլյամ Բրայանի առաջարկի մերժումից և «Լուզիտանիայի» կործանումից հետո հասունացել էր պատերազմ հայտարարելու պահը:

Սակայն այս հարցում կային տարաձայնություններ ամերիկյան կառավարող շրջաններում: Օրինակ՝ գնդապետ Հաուզը և պետքարտուղար Ռոբերտ Լանսինգը կողմ էին Գերմանիայի հետ հարաբերությունների խզմանը: Նրանց կարծիքով անհրաժեշտ էր անհապաղ վերջնագիր ներկայացնել Գերմանիային ստորջրյա պատերազմը դադարեցնելու պահանջով: Իսկ Ուիլյամ Բրայանի կարծիքով այդ քայլը հակասում էր չեզոքության իրական սկզբունքներին: Ըստ նրա՝ Միացյալ Նահանգների համար Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունն իր մեջ ավելի քիչ վտանգ չէր պարունակում, քան Գերմանիայինը, ուստի անհրաժեշտ էր ոչ թե վերջնագիր ներկայացնել, այլ հանդես գալ միաժամանակ երկու հայտագրերով՝ մեկը պետք է ուղղված լիներ Մեծ Բրիտանիային՝ շրջափակումը դադարեցնելու, մյուսը՝

Գերմանիային՝ ստորջրյա պատերազմը դադարեցնելու պահանջներով:

Ուիլյամ Բրայանի այս տեսակետին դեմ արտահայտվեց նախագահ Վիլսոնը: Նա գտնում էր, որ առաջին հերթին պետք է ստիպել Գերմանիային դադարեցնել ստորջրյա պատերազմը և հետո միայն բրիտանական կողմի հետ պայմանավորվել շրջափակումը վերացնելու հարցում:

1915 թ. հունիսի 9-ին ամերիկյան կառավարությունը Գերմանիային ներկայացրեց «Լուզիտանիայի» գործով երկրորդ հայտագիրը՝ պահանջելով դադարեցնել հարձակումը քաղաքացիական նավերի վրա: Ուիլյամ Բրայանը հրաժարվեց ստորագրել այս հայտագիրը: Արդյունքում վերջինս ստիպված եղավ հրաժարվել նաև իր զբաղեցրած պաշտոնից: Նրան փոխարինելու եկավ Ռոբերտ Լանսինգը, ով, ինչպես վերը նշվեց, հակված էր Գերմանիայի հետ հարաբերությունների անմիջապես խզմանը: Գալով իշխանության՝ վերջինս հանդես եկավ Գերմանիայի դեմ պատերազմի ուղիղ սպառնալիքով, եթե նա չդադարեցնի հարձակումը ոչ ռազմական նավերի վրա:

Փաստորեն, արդեն իսկ 1915 թ. մայիսի դրությամբ չեզոքության մասին խոսելը, կարելի է ասել, ավելորդ էր: Ճիշտ է, Միացյալ Նահանգները ակտիվ պատերազմի մեջ չէր, բայց հստակ երևում էր վերջինիս անտանտամետ ուղղվածությունը: Ինչո՞ւ: Աշխարհաքաղաքական տեսանկյունից այս ուղղվածությունը հնարավորություն էր տալիս Միացյալ Նահանգներին ապագայում հանդես գալ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ

հավասար պայմաններով, ավելին՝ պատերազմից հետո վերջիններս կլինեին Միացյալ Նահանգներից ֆինանսական կախման մեջ: Մյուս գործոնը էթնիկական էր: Ամերիկյան ժողովրդի մեծ մասը անգլալեզու էր, իսկ լեզվի և մշակույթի ընդհանրությունն այլընտրանք չէր թողնում ամերիկյան կառավարության համար: Կարևոր էր նաև գաղափարական գործոնը: Ժողովրդավարական երկրներին աջակցելն ավելի համահունչ էր ամերիկյան կառավարման ավանդույթներին: Ամերիկացիների մեջ կար այն գիտակցումը, որ օգնելով ժողովրդավարական երկրների՝ նրանք նպաստում են աշխարհում ժողովրդավարության տարածմանը:

Նախագահ Վիլսոնի անտանտամետ դիրքորոշմանը կողմ արտահայտվեցին նաև Միացյալ Նահանգների կառավարող շրջանները: Երկրում սկսեց թափ հավաքել ռազմական առևտուրը: Ամերիկյան տնտեսությունն աստիճանաբար սկսեց ռազմականացվել: Եթե նախկինում ամերիկյան բանկերին չէր թույլատրվում պատերազմող կողմերին փոխառություններ տրամադրել, քանի որ դա հակասում էր իրական չեզոքության ոգուն, ապա այժմ այն խրախուսվում էր, որովհետև ամերիկյան արտահանումների կրճատումը, վերջին հաշվով, կնպաստեր երկրի տնտեսական դրության վատթարացմանը: Վարկավորման արգելումը կհանգեցներ պատվիրատուների գնողունակության անկման, ինչն իր հերթին կբերեր պատվերների դադարեցման: Այսպիսով՝ եվրոպական երկրների վարկավորման հարցը անմի-

ջականորեն կապվեց երկրի տնեսական վիճակի բարելավման հետ:

Նախագահ Վիլսոնը վերանայեց իր դիրքորոշումը վարկավորման հարցում և Լանսինգի հետ զրույցի ժամանակ հայտարարեց, որ առևտուրը պատերազմող կողմերի հետ միանգամայն օրինական է, և դրան խոչընդոտող բոլոր հանգամանքներն անհրաժեշտ է վերացնել: Սակայն տրամադրված վարկերի ողջ գումարը պետք է ծախսվեր Միացյալ Նահանգների սահմաններում:

Անտանտի երկրներին առատորեն վարկեր տրամադրելու հետ մեկտեղ նախագահ Վիլսոնը քաջ գիտակցում էր, որ Միացյալ Նահանգներին անհրաժեշտ էր ոչ թե Գերմանիայի լիակատար կործանումը, այլ նրա քաղաքական ռեժիմի փոփոխումը և Եվրոպայում ուժերի հավասարակշռության պահպանումը: Իսկ սրա համար Միացյալ Նահանգներին հարկավոր էր այդ գործընթացում ունենալ անմիջական մասնակցություն:

1915 թ. աշնան դրությամբ դեռևս ամերիկյան ժողովրդի ճնշող մեծամասնությունը դեմ էր Միացյալ Նահանգների մասնակցությանը պատերազմին: Այդ պատճառով Միացյալ Նահանգներում սկսվեց «ռազմական պատրաստվածության» միջոցառումը❖: Հայտարարվեց նախագահ Վիլսոնի կառավարու-

❖ Նշենք, որ այս գաղափարը շրջանառվում էր դեռևս 1914 թ. և այն աջակցություն էր գտնում այնպիսի հեղինակավոր գործիչների կողմից, ինչպիսիք են Ռոբերտ Լանսինգը, Թեոդոր Ռուզվելտը, Հենրի Լոջը և այլք: 1914 թ. դեկտեմբերի 1-ին ստեղծվեց «Ազգային անվտանգության

թյան ռազմական ծրագիրը, որով նախատեսվում էր կանոնավոր բանակի թվաքանակի աճ❖, առանձնացվում էր շուրջ կես միլիարդ դոլար ռազմածովային նավատորմը հզորացնելու համար❖: Նախատեսվում էր նաև մայրցամաքային պահեստային բանակի ստեղծում (թվով 400.000 մարդ):

1916 թ. Միացյալ Նահանգներում նախագահական ընտրություններ էին: Նախագահ Վիլսոնի մրցակիցը հանրապետական թեկնածու, գերագույն դատարանի անդամ Չարլզ Հյուզն (Charles Hughes) էր: Դեմոկրատ թեկնածուն պայքարի մեջ մտավ «նախագահ Վիլսոնն ամերիկյան ազգին հեռու պահեց պատերազմից» կարգախոսով: Վիլսոնն այս ընտրություններում հաղթանակ տարավ ձայների քիչ առավելությամբ՝ 277 ընտրական միավոր 254-ի դեմ:

լիգան», որը Թեոդոր Ռուզվելտի և գեներալ Լեոնարդ Վուդի գլխավորությամբ պետք է զբաղվեր երկրի ռազմական արդյունաբերության ֆինանսավորմամբ և սպառազինության մակարդակի բարձրացմամբ:

❖ 1916 թ. հունիսի 3-ին Կոնգրեսն անցկացրեց Ազգային անվտանգության մասին օրենք, որով կանոնավոր բանակի թիվը 90 հազարից հանելու էր 175 հազարի՝ մինչև 200 հազար մեծացնելու թույլտվությամբ:

❖ Ռազմածովային նավատորմի հզորացման վերաբերյալ օրենքը Կոնգրեսն ընդունեց 1916 թ. օգոստոսի 15-ին՝ ծրագրի իրականացման համար հատկացնելով 500-600 մլն. դոլար:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 4

Հրապարակային դիվանագիտության կոչը, գնդապետ Հաուզի «Խաղաղության նախագիծը», «Հաուզ-Գրեյ» համաձայնագիրը, «խաղաղություն առանց հաղթանակի», ԱՄՆ-Գերմանիա դիվանագիտական հարաբերությունների խզումը, «Ցիմմերմանի հայտագիրը», 1917 թ. ապրիլի 6-ի Գերմանիային պատերազմ հայտարարելու հռչակագիրը:

Օր օրի ակնհայտ էր դառնում, որ Միացյալ Նահանգներն այլևս չէր կարող պահպանել իր չեզոքությունը: Հասկանալով, որ այլևս անհնար է միջնորդական դիվանագիտությամբ կանգնեցնել պատերազմը՝ 1916 թ. վերջին նախագահ Վիլսոնը որոշեց փոխել ամերիկյան չեզոքության քաղաքականության շեշտադրումը: Նա անցավ «հրապարակային դիվանագիտության»: Վիլսոնի հերթական նախաձեռնության հիմնական արտահայտումը եղավ 1916 թ. դեկտեմբերի 18-ի հայտագիրը՝ ներկայացված հակամարտող կողմերին, որով նա պահանջում էր նրանցից հայտարարել իրենց ռազմական նպատակները: Նախագահ Վիլսոնը փորձում էր հասկացնել, որ ինքը մտադիր է շարունակելու պատերազմի դադարեցման և հետպատերազմյան խաղաղության կարգավորման ամերիկյան ծրագիրը: Այն դեռևս 1915 թ. աշնանը մշակվել էր գնդապետ Հաուզի կողմից և կոչվում էր «Խաղաղության նախագիծ»: Նպատակն էր վերջ դնել Աշխարհամարտին և հաստատել կայուն խաղաղություն: Ըստ ծրագրի՝ Միացյալ Նահանգներն Անտանտի հետ նախնական բանակցու-

թյուններից հետո պետք է հանդես գար խաղաղության համաժողովի հրավիրման նախաձեռնությամբ: Եթե Գերմանիան հրաժարվեր համաժողովին մասնակցելուց կամ էլ մերժեր խաղաղության առաջարկը, ապա Միացյալ Նահանգները կմտներ պատերազմի մեջ հօգուտ դաշնակիցների:

Անտանտի հետ բանակցություններում Միացյալ Նահանգները նախատեսում էր.

- «Ծովերի ազատության» սկզբունքի հաստատում, որը պետք է երաշխավորվեր հատուկ համաձայնագրով, որը կնախատեսեր այն խախտող երկրի նկատմամբ պատժամիջոցների կիրառում:
- «Մարինիզմի» (ռազմածովային նկրտումների) դադարեցում, ինչը ենթադրում էր Մեծ Բրիտանիայի ռազմածովային հզորության թուլացում:
- Գերմանիան պետք է հրաժարվեր բռնազավթած (անեքսիայի ենթարկած) տարածքներից, որի դիմաց կստանար փոխհատուցում Եվրոպայից դուրս՝ Փոքր Ասիայում և Աֆրիկայում:

Սա նշանակում էր ուժեղ Գերմանիայի պահպանում, որին Միացյալ Նահանգները մտադրված էր օգտագործել պատերազմից հետո ի հակակշիռ Անտանտի: Ամերիկյան նախագծի իրագործումը փաստորեն պետք է պահպաներ ուժերի հավասարակշռությունը Եվրոպայում, ինչը կամրապնդեր Միացյալ Նահանգների դիրքերը հետպատերազմյան խաղաղության հաստատման ճանապարհին:

1915 թ. դեկտեմբերին գնդապետ Հաուզն ուղևորվեց Եվրոպա՝ հակամարտող կողմերի հետ քննարկելու խաղաղության հաստատման ամերիկյան նախագիծը: 1916 թ. փետրվարի 17-ին Էդուարդ Հաուզը և Էդուարդ Գրեյը մշակեցին համաձայնագրի տեքստը, ըստ որի՝ Անտանտի համար բարենպաստ պահ լինելու դեպքում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները պետք է դիմեին Միացյալ Նահանգների կառավարությանը՝ խաղաղության համաժողով հրավիրելու առաջարկով: Սակայն եթե Գերմանիան հրաժարվեր մասնակցել այդ համաժողովին, Միացյալ Նահանգները կմտներ պատերազմի մեջ: Համաժողովի կայացման դեպքում պետք է ապահովվեր բարենպաստ պայմաններ դաշնակիցների համար: Եթե Գերմանիայի մեղքով համաժողովը հաջողություն չունենար, ապա Միացյալ Նահանգները պետք է լքեր համաժողովը և պատերազմ հայտարարեր Գերմանիային: Համաժողովի հրավիրման ժամանակը պետք է համատեղ որոշեին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան:

Այս համաձայնագրին վիճակված չէր իրականանալ: 1916 թ. գարնանը, երբ ռազմաճակատում իրավիճակը դասավորվել էր հօգուտ Անտանտի, գնդապետ Հաուզը Էդուարդ Գրեյին ուղարկած հեռագրով փորձեց հիշեցնել, որ ժամանակն է դիմել Միացյալ Նահանգներին համաժողովի հրավիրման առաջարկով: Բրիտանական կողմը մերժեց Էդուարդ Հաուզի առաջարկը՝ պատճառաբանելով, որ այն դեռևս վաղաժամ է և, բացի այդ, Մեծ Բրիտանիան չի կարող գործել առանց Ֆրանսիայի համա-

ձայնության: Ինչ վերաբերում է ֆրանսիական կառավարությանը, ապա այն մերժել էր Էդուարդ Հաուզի առաջարկը: Ֆրանսիան հայտարարել էր, որ Անտանտի երկրները շահագրգռված չեն Միացյալ Նահանգների և Գերմանիայի միջև պատերազմի բռնկումով:

Էդուարդ Հաուզն ըմբռնեց, որ Անտանտի երկրները դեմ էին խաղաղության համաժողով հրավիրվելուն և չէին ցանկանում, որ Միացյալ Նահանգները միանա պատերազմին: Այսպիսով՝ 1916 թ. գարնան «Հաուզ-Գրեյ» համաձայնագիրը չիրականացավ:

Եվ նախագահ Վիլսոնը, ինչպես վերը նշվեց, նախագահական ընտրություններից հետո փոխեց ամերիկյան չեզոքության քաղաքականության շեշտադրումը՝ անցնելով «հրապարակային դիվանագիտության» և առաջնորդվելով «խաղաղություն առանց հաղթանակի» կարգախոսով: Ակնհայտ է վիլսոնյան ելույթի բարոյականությունը. փաստորեն այն հանուն խաղաղության և նոր աշխարհի կառուցման հաղթանակից հրաժարվելու կոչ էր: Նախագահ Վիլսոնը, զարգացնելով իր չեզոքության հայեցակարգը, բացահայտ արտահայտեց «անաչառ խաղաղության» հաստատման գործը ղեկավարելու իր հավակնությունների մասին: Սակայն հնարավո՞ր էր արդյոք նման պայմաններում այդ առաջարկները կյանքի կոչել: Ամենայն հավանականությամբ՝ ոչ. միջազգային թատերաբեմի եվրոպական գլխավոր դերակատարները դեռևս համոզված էին, որ «անաչառ խաղաղության»

կարելի է հասնել միայն թշնամու նկատմամբ հաղթանակ տանելով:

Այս պարագայում, թվում էր, դաշնակիցների վերաբերմունքն իր առաջարկների նկատմամբ փոքր-ինչ մեղմացնելու համար նախագահ Վիլսոնը կվերանայեր իր որդեգրած քաղաքական ուղղվածությունը: Սակայն նա ցուցաբերեց քաղաքական համառություն և չհրաժարվեց իր բռնած ուղուց: Վուդրո Վիլսոնն անդրդվելի մնաց նույնիսկ այն ժամանակ, երբ Միացյալ Նահանգները, խզելով դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ, հայտնվեց վերջինիս պատերազմ հայտարարելու իրողության առջև:

1917 թ. հունվարի 9-ին Գերմանիան հայտարարեց ստորջրյա անսահմանափակ պատերազմ՝ հուսալով, որ կստիպի Անտանտին հանձնվել, նախքան Միացյալ Նահանգները կմտնի պատերազմի մեջ:

1917 թ. հունվարի 31-ին Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան Յոհան Բերնսթորֆը պետդեպարտամենտին տեղեկացրեց Գերմանիայի հայտարարության մասին: Ամերիկյան կողմի պատասխանը չուշացավ. փետրվարի 3-ին Միացյալ Նահանգները խզեց դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ:

Թվում էր, թե Միացյալ Նահանգներն այլևս դանդաղելու պատճառ չունի, սակայն Միացյալ Նահանգների ներգրավումը պատերազմին նախագահ Վիլսոնը բացատրում էր միայն հան-

գամանքների դասավորումով, որոնք, նրա պատկերացմամբ, ռազմավարական նկրտումներին չեն առնչվում:

Հանգամանքները չուշացան: Դրանում իր նշանակալի դերն ունեցավ հայտնի «Ցիմմերմանի հայտագիրը»❖, որը բացահայտեց Գերմանիայի ագրեսիվ տրամադրվածությունը Միացյալ Նահանգների նկատմամբ:

Միացյալ Նահանգների կառավարությունն այլևս այլընտրանք չուներ և հարկադրված էր կտրուկ երանգ հաղորդել իր գործողություններին: Ապրիլի 2-ին տեղի ունեցավ կոնգրեսի համատեղ արտակարգ նիստ, որի արդյունքում Միացյալ Նահանգները պատերազմ հայտարարեց Գերմանիային: «Մենք մտնում ենք պատերազմի մեջ,- հայտարարեց նախագահ Վիլսոնը,- որտեղ արդեն մղվել ենք ոչ մեր կամքով, քանզի չկան այլ միջոցներ մեր իրավունքները պաշտպանելու... Մեր գործողությունների հիմքը պետք է հանդիսանա ոչ թե վրեժը կամ մեր ազգի ուժի դրսևորումը, այլ մարդու իրավունքների պաշտպանությունը: Այսօր, երբ խոսքը ողջ աշխարհում խաղաղության հաստատման և ազգերի ազատության մասին է, չեզոքությունը այլևս հնարա-

❖ 1917 թ. հունվարի 16-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Ցիմմերմանը (Arthur Zimmermann) Մեքսիկայում գերմանական դեսպանորդին ուղարկեց գաղտնի հրահանգ, որով նախատեսվում էր բանակցություններ սկսել Մեքսիկայի կառավարության հետ Միացյալ Նահանգների դեմ Գերմանիայի հետ ռազմական դաշինք կնքելու համար: Նախատեսվում էր այդ դաշինքին մասնակից դարձնել նաև Ճապոնիային: «Ցիմմերմանի հայտարարագիրը» որսաց անգլիական հետախուզությունը և փոխանցեց Միացյալ Նահանգների կառավարությանը:

վոր և ցանկալի չէ... Միացյալ Նահանգները կպայքարի ժողովրդավարության հաստատման և բոլոր նրանց իրավունքների պաշտպանության համար, ովքեր գտնվում են իրենց իշխանությունների ճնշման տակ: Ազատության կարիք ունի նաև գերմանական ազգը, որը ներքաշվել է պատերազմի մեջ իր իսկ իշխանության աշխարհանվաճ նկրտումների արդյունքում... Մենք կպայքարենք նաև ազատ ազգերի այնպիսի դաշինք ստեղծելու համար, որը կապահովի բոլոր ազգերի խաղաղությունն ու անվտանգությունը և ի վերջո ողջ աշխարհը կդարձնի ազատ... Մենք պատրաստ ենք ընդունելու այդ մարտահրավերն աշխարհում ժողովրդավարության և քաղաքական ազատության հաստատման համար: Ամերիկան այլ ճանապարհ չունի, և մեզ հետ է Աստված»[1]: Ապրիլի 6-ին նախագահ Վիլսոնը ստորագրեց Գերմանիային պատերազմ հայտարարելու հռչակագիրը❖:

[1] Ելույթի ամբողջական տարբերակը տե՛ս Address to Congress recommending declaration of a state of war with Germany, April 2, 1917, President Wilson's Foreign policy, Messages, Addresses, Papers, ed. by **J. Scott,** New York, "Oxford University Press", 1918, p. 274-287.

❖ Գերմանիայի դաշնակից Ավստրո-Հունգարիային ԱՄՆ պատերազմ հայտարարեց 1917 թ. դեկտեմբերի 7-ին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով ներկայացված դասախոսական նյութը՝ նշենք, որ այն նպատակ է հետապնդում ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ և տեսական պատկերացումներ Եվրոպայի և Ամերիկայի Նոր և Նորագույն պատմության անցումային շրջափուլի վերաբերյալ: Այս և առանձնացված խնդիրների համատեքստում խոսվում է ԱՄՆ արտքաին քաղաքկան հայեցակարգի մասին. «Մոնրոյի դոկտրինայից» մինչև «Վիլսոնակաություն», «մեկուսացումից» մինչև «համաշխարհային դերակատարում»: Ներկայացվում է Առաջին աշխարհամարտի և դրա նկատմամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին-քաղաքական դիրքորոշումը: Անդրադարձ է արվում Միացյալ Նահանգների «չեզոք» դիրքորոշմանը: Չափման մեկ դաշտում դնելով «չեզոքություն» և «միջնորդություն» եզրերը՝ տրվել են դրանց ռազմավարական և աշխարհաքաղաքական հիմնավորումները: Սույն ձեռնարկի շրջանակներում փորձ է արվել Միացյալ Նահանգների դիրքրոշումը ներկայացնել համընդհանուր խաղաղության պահպանման համատեքստում: Աշխատանքում արծարծվում է նաև Առաջին աշխարհամարտին Միացյալ Նահագների մասնակցության հիմնահարցը: Այս առումով անդրադարձ է արվել մասնակցության դրդապատճառներին, որոնք, ի վերջո, հանգեցրին «պատերազմ հանուն խաղաղության» կարգախոսի կենսագործմանը:

❖❖❖

Ներկայացվող նյութի տրամաբանական և թեմատիկ ամբողջությունը ենթադրում է նաև անդրադարձ հետպատերազմյան կարգավորման գործընթացին ԱՄՆ մասնակցությանը: Հարգելի՛ ընթերցող, հայցում ենք Ձեր ներողամտությունը ծավալային դրդապատճառներով նշյալ գործընթացին չանդրադառնալու համար և խոստանում այն նեկրայացնել առանձին դասախոսությամբ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Архив полковника Хауза, тт. 1,2, Москва, “Государственное социально-экономическое издательство”, 1937.
2. **Гроциус Г.,** О праве войны и мира, Москва, “Государственное издательство юридической литературы”, 1956.
3. **де Ваттель Э.,** Права народов или принципы естественного права, применяемые к поведению и делам наций и суверенов, Москва, “Государственное издательство юридической литературы”, 1960.
4. **Ллойд Джордж Д.,** Военные Мемуары, тт. 1,2, Москва, “Соцэкгиз”, 1934.
5. **Ллойд Джордж Д.,** Военные Мемуары, т. 3, Москва, “Соцэкгиз”, 1935.
6. **Людендорф Э. ,** Мои воспоминания о войне 1914-1918 гг., т. 1, Москва, “Гос. изд.”, 1923.
7. **Baker R.,** Woodrow Wilson: Life and Letters, vol. 6, Facing war, 1915-1917, New York, “Doubleday, Page & Conpany,” 1927.
8. **Hendrick B.,** The Life and Letters of Walter H. Page, Containing the Letters to Woodrow Wilson, vol. 1, Garden City-New York, “Doubleday, Page & Company”, 1924.

9. **Hendrick B.,** The Life and Letters of Walter H. Page, Containing the Letters to Woodrow Wilson, vol. 3, Garden City-New York, “Doubleday, Page & Company”, 1926.
10. **Lansing R.,** War Memoirs, Indianapolis-New York, “Bobs-Merrill Co.”, 1935.
11. Papers Relating to the Foreign Relations of The Unaited States 1914, Suplement, The World War, Washington, “Government Printing Office”, 1928.
12. Papers Relating to the Foreign Relations of The Unaited States 1915, Supplement, The World War, Washington, “Government Printing Office”, 1928.
13. Papers Relating to the Foreign Relations of The Unaited States 1916, Supplement, The World War, Washington, “Government Printing Office”, 1929.
14. Papers Relating to the Foreign Relations of The Unaited States, The Lansing Papers 1914-1920, vol. 1, Washington, “Government Printing Office”, 1939.
15. President Wilson’s Great Speeches and other History Making Documents, Chicago, “Station & Van Vliet Co.”, 1917.
16. President Wilson’s Foreign Policy: Massages, Addresses, Papers, ed. by **J. Scott,** New York, “Oxford University Press”, 1918.
17. President Wilsons’s State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, New York, “George H. Dorn Company”, 1917.
18. **Tumulty J.,** Woodrow Wison: As I Know Him, Garden City- New York, “Doubleday, Page & Company’’ 1921.

ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19. **Իվանյան Է.,** Սպիտակ տուն. Պրեզիդենտներ և քաղաքականություն, Երևան, «Հայաստան», 1979:
20. **Շիրինյան L.,** Արևմուտքի անկումը, Վուդրո Վիլսոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման ամերիկյան փորձի ձախողումը, Երևան, «Ամարաս», 2013:
21. **Болховитинов Н.,** Доктрина Монро (происхождение и характер), Москва, “ИМО”, 1959.
22. **Гершов З.** “Нейтралитет” США в годы Первой Мировой войны, Москва, “Соцэкгиз”, 1962.
23. **Гибсон Р., Прендергаст М.,** Германская подводная война 1914-1918 гг., Москва, “Воениздат”, 1938.
24. **Горохов В.,** История международных отношений 1918-1939, Москва, “Изд. МГУ”, 2004.
25. История дипломатии, под ред. **В. Зорина** и др., т. 1, Москва, “Гос. изд. Политической литературы”, 1959.
26. **Уткин А.,** Дипломатия Вудро Вилсона, Москва, “Международные отношения”, 1989.
27. **Хофстедтер Р.**, Американская политическая традиция и ее создатели, Москва, “Наука”, 1992.**Шацилло В.,** Расчет и безрассудство. Германо-Американские отношения в 1898-1917гг., Москва, “ИВИ РАН”, 1998.
28. **Ambrosius L.,** Woodrow Wilson and the American Diplomatic Traditions: The Ttreaty Fight in Perspective, Cambridge, “Cambridge University Press”, 1987.
29. **Billington R.,** American History After 1865, New Jersey, “Adams

and Co.", 1974.

30. **Daniels J.,** The Wilson Era, Years of Peace 1910-1917, Chapel Hill, "The University of North Carolina Press", 1944.
31. **Kendrick C.,** Woodrow Wilson: World Statesman, Boston, "Twayne Publishers", 1987.
32. **Kerneck S.**, Distractions of Peace During the War and Peace: The Lloyd George Government's Reaction to Woodrow Wilson (December, 1916-November, 1918), Philadelphia, "The American Philos. Soc.", 1975.
33. **Kirakossian A.,** The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony, Detroit, "Wayne State Univ. Press", 2004.
34. **LaFeber W.,** The American Age: US Foreign Policy at Home and Abroad, Since 1750, New York, "Norton", 1989.
35. **May E.,** The World War and American Isolation 1914-1917. Cambridge, "Harvard University Press", 1956.
36. **Perkins D.,** A History of the Monroe Doctrine, Boston, "Little Brown and Co.", 1941.
37. **Smith D.,** Robert Lansing and American Neutrality 1914-1917, Los Angeles, "University of Carolina Press", 1958.
38. The Diplomacy of World Power: The United States, 1889-1920, by **A. Link** and **W. Lesry,** New York, "St. Martin's Press", 1970.
39. **Tindall G., Shi D.,** America a Narrative History, New York, "Norton and Company", 1992.
40. **Walworth A.,** Wilson and His Peacemakers. American Diplomacy at the Paris Pease Conference 1919, New York, "Norton & Company", 1986.

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

41. **Գասպարյան Կ.,** ԱՄՆ-ի «խաղաղարար» չեզոքությունը Առաջին աշխարհամարտի սկզբին, Միջազգային գիտաժողովի նյութեր, նվիրված ԱրՊՀ հիմնադրման քառասնամյակին, պրակ 1, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2009, էջ 237-238:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

42. Дипломатический словарь, под ред. **А. Громыко,** т. 3, Москва, “Наука”, 1986.
43. The Presidency A to Z, ed. by **M. Nelson**, Washington, “Congressional Quarterly Inc.”, 1998.
44. 100 Key Documents in American Democracy, ed. by **P. Levy**, London, “Greenwood Press”, 1994.

Կարեն Յուրիկի Գասպարյան

ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.

1914-1917 թթ.

(դասախոսության նյութեր)

Karen Yu. Gasparyan

U.S. FOREIGN POLICY DURING WORLD WAR I:

1914-1917

(lecture materials)

Карен Ю. Гаспарян

ВНЕШНЯЯ ПОЛИТИКА США В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ:

1914-1917

(материалы к лекции)

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 3.25:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1